ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 12 Общественные науки

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ԼԵՎՈՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ — ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԿՐՈՆՔՆԵՐՈՒ ՄԱՏԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Բավական ժամանակ է, ինչ հրապարակվել է ամերիկահայ առաջադիմական հասարակական գործիչ ու գրականագետ, «Հո՞ երթաս Ամերիկա» և այլ գործերի հեղինակ Լևոն Մարտիրոսյանի «Համաշխարհային կրոնքներու մատերիալիստական հիմունքները» երկհատոր ստվարածավալ աշխատությունը։

Իր գրքի առաջաբանում Լ. Մարտիրոսյանը որոշակիորեն շարադրում է աշխատության նպատակը՝ բացահայտել կրոնի հակագիտական էությունը, ցույց տալ, որ այն մարդկանց հեռացնում է իրական աշխարհի հարցերից, չլատում նրանց ուժերը, մթագնում նրանց գիտակցությունը, անզոր դարձնում կապիտալիստական դաժան իրականության ու պատմության արհավիրքների առջև։ Ցույց տալով այն իրական սոցիալական միջավայրը և իմացաբանական ակունքները, որից ծնվում է աշխարհի աղավաղված, կրոնական ըմբռնումը, հեղինակն իր առջև նպատակ է դնում զորեղ փաստերով հերքել մասնավորապես սփյուռքահայության լայն շրջաններում տարածված այն թյուր կարծիքը, թե իբր կրոնն է հայ ժողովրդի փրկող ու պահպանող ուժը։ Եվ նա իրավացիորեն գրում է. «Իսկ գալով հայ ժողովուրդի գոյության հարցին, ոչ ոքի համար այլևս մութ չէ մնացեր այն ճշմարտությունը, որ հայ ժողովուրդը այսօր իր գոյությունը պետք չունի կապելու գերբնական ուժերու հովանավորության հավատքին։ Ան ունի իր ազատ հայրենիքը, իր գիտությունը։ Աստվածաշունչը չէր, որ օգնեց հայ ժողովուրդին, այլ Խորհրդային մեծ Միությունը։ Կրոնքը չէր, որ կատարեց հրաշքներուն հրաշքը, այլ խորհրդային իրավակարգի տակ հավաքական ուժը, հավաքական աշխատանքը» (Ա., էջ 24—25), Եվ նա շեշտում է, որ իր նպատակն է ցրել այն սխալ մտայնությունը, որ գոյություն ունի սփյուռքահայության մեջ և հին սերնդի ներկայացուցիչների մոտ հայրենիքում, թե «...ասկե հետո ևս, եթե Հայը պիտի ապրի, պիտի ապրի իր եկեղեցիով, իր աղոթքով ու աստվածային շնորհքով» և մեր միամիտ ու անկեղծ հավատավորների «հավատքը բաժնել երկինքեն, բաժնել գերբնական ուժերեն, և կեդրոնացնել իր սեփական ուժերու գիտակցության վրա» (Ա., էջ 25)։

Լևոն Մարտիրոսյանի աշխատությունը չափազանց լայնածավալ է իր ընդգրկումով։ Վերնագիրն ինքնին խոսում է գործի ծավալի մասին։ Իհարկե, տվյալ վերնագիրը՝ «Համաշխարհային կրոնների մատերիալիստական հիմունքները», ճիշտ չէ, որովհետև և ոչ մի կրոն մատերիալիստական հիմունք չունի և չի կարող ունենալ. կրոնների հիմունքները իդեալիստական են և առանց իդեալիզմի, առանց գերբնականի, առանց հոգու գաղափարի, կրոնը գոյություն ունենալ չի կարող։ Ինքը հեղինակը գրում է. «Մարդը կրոնքը ստեղծեր է համաձայն իր երկրի աշխարհագրական, տնտեսական և ընկերային պայմաններուն, իսկ տիրող դասակարգը կրոնքը ծառայեցուցեր է իր դասակարգային շահուն և տիրապետության նպատակին։ ...Մարմին մը կա, որ մեզմե բարձր է, մեզի հրամայող և բարիք պարգևող, ու մենք պարտավոր ենք պաշտել զայն, կատարել անոր պատվերները, և հարգել անոր օրենքները։ Այս է բոլոր կրոնքներուն բնույթը» (Ա., էջ 30)։

Այսպիսով, ակնհայտ է, որ Լևոն Մարտիրոսյանի աշխատանքը նվիրված է ոչ թե կրոնների «մատերիալիստական հիմունքների», այլ նրանց սոցիալական և իմացաբանական արմատների բացահայտմանը, նրանց դասակարգային էության մերկացմանը։ Ինքը հեղինակն էլ նշում է, որ իր գործը նվիրված է կրոնի «մատերիալիստական վերլուծումին»։ Եվ սա, իհարկե, ճիշտ է։

Եթե վերանանք վերնագրի մեջ և աշխատության որոշ էջերում տերմինների գործածության

---

1 Լևոն Մարտիրոսյան, Համաշխարհային կրոնքներու մատերիալիստական հիմունքները, Ա. հատոր, Բեյրութ, 1960, 533 էջ, Բ. հատոր, Բեյրութ, 1960, 510 էջ։

անճշտություններից, Լևոն Մարտիրոսյանի աշխատությունն իր ամբողջության մեջ կրոնի առաջացման ու պահպանման պատճառները, նրա սոցիալ-դասակարգային էությունը բացահայտող մի ամբողջական ուսումնասիրություն է։ Հեղինակը, քննելով կրոնի պատմության, զարգացման, սոցիալական էության մասին բազմաթիվ աշխատություններ և աթեիստական երկերը, դրանք ի մի է ամփոփել, ընտրելով իր կողմից ընդունելին։ Սակայն հեղինակը չի սահմանափակվում այդ քաղվածքները ընտրելով։ Դրա հետ միասին նա քննադատաբար է օգտագործում այդ երկերը, նշում նրանց թերություններն ու սխալները և մի շարք հարցերում հանդես է բերում միանգամայն ինքնուրույն գիտական մոտեցում։

Աշխատության բաժանումը երկու հատորների իմաստավորված է հարցի քննարկման տարբեր ասպեկտներով։ Առաջին հատորն ամբողջությամբ նվիրված է առավել տարածված կրոնական մի շարք ուղղությունների կամ, ինչպես ընդունված է ասել, մի շարք կրոնների առաջացման ու ձևավորման պատմության քննարկմանը։ Այս հատորում վերլուծված են ինդուիզմի, բուդդայականության, կոնֆուցիականության, զրադաշտականության, հուդաիզմի, սինտոիզմի, մահմեդականության, բրիստոնեության առաջացման պատմությունը, դրանք ծնող պատմական-սոցիալական պայմանները, դրանց փոխադարձ կապերն ու փոխազդեցությունները։ Մասնավորապես հատուկ քննարկման առարկա են քրիստոնեական կրոնի առաջացումը, նրա աղբյուրների վերլուծությունը և փոխառությունները արևելյան (փոքրասիական, եգիպտական, սիրիական և այլն) կրոններից։

Մարտիրոսյանը բարեխղճորեն շարադրում է այդ կրոնների ծագման մասին բուն կրոնական առասպելները, այսինքն՝ նախ, ցույց է տալիս, թե ինչ են ասում այդ մասին կրոնական աղբյուրները, ապա բազմաթիվ գիտնականների, որոնց մեծ մասը բուրժուական մտածողներ են, հետազոտությունների հիման վրա հերքում է կրոնական առասպելները, ցույց տալիս դրանց անշող մեծամասնության կեղծությունն ու գիտական հավաստիությունից զուրկ լինելը և բացահայտում է նշված կրոնների առաջացման սոցիալ-դասակարգային արմատները։

Կրոնական աղբյուրներին և, հատկապես, քրիստոնեական կրոնի պաշտոնական գրականությանը լավատեղյակ լինելը (մի բան, որ հիմնական պակասություն է մեր համարյա բոլոր հետազոտողների համար), նրան հնարավորություն են տալիս շարադրել դրանց հիմնական դրդապատճառները, վեր հանել յուրահատկությունները և բացահայտել դրանցում, հատկապես «աստվածաշնչի» մեջ տեղ գտած բազմաթիվ անհեթեթությունները։ Այստեղ նրան մեծ չափով ժամանակակից է Մ. Գ. Ֆերահյանի «Քրիստոնեության և հեթանոս կրոնքների բաղդատական» աշխատությունը, որը դժբախտաբար մեր ձեռքի տակ չկա։ Այդ գիրքը, Լ. Մարտիրոսյանի գնահատությամբ, «թեև մարքսյան վերլուծության մոտեցած չէ, սակայն բաղդատական ուսումնասիրություն մըն է, բայց հարուստ նյութեր ունի կրոնական ավելորդապաշտության շենքը քանդելու տեսակետեն» (Ա., էջ 43)։

Առավել հետաքրքրություն է ներկայացնում աշխատության երկրորդ հատորը, որտեղ կրոնը քննարկվում է ընդհանրապես որպես հասարակական գիտակցության ձև, տրվում է կրոնի ընդհանրական աղբյուրների, առաջացման ուղիների և պահպանման պատճառների գիտական բացատրությունը։ Ընդ որում քննարկումն ընթանում է մարտնչող մատերիալիզմի դիրքերից։ Դա հատկապես ցցուն է Ե մասում, ուր լուսաբանվում է համաշխարհային պատմության մեջ քրիստոնեական կրոնի խաղացած բացասական դերը։

Բազմաթիվ համոզեցուցիչ փաստերով Լ. Մարտիրոսյանը ցույց է տալիս, որ ինչպես իր ծագման շրջանում, այնպես էլ և այժմ, քրիստոնեական կրոնը (ինչպես և մյուս կրոնները) արդարացրել է մարդկանց ստրկացումն ու շահագործումը, բնաջնջող պատերազմներն ու ավարառությունը։ Կրոնական բարոյականությունն այժմ բուրժուական բարոյականությունն է, որն անամոթաբար արդարացնում է տիրողների ու շահագործողների ամեն մի կեղծիքն ու սուտը։

Մարտիրոսյանը նշում է այդ տեսակետից հայտնի արդիական մի փաստ։ 1960 թ. մեծ պետությունների ղեկավարների փարիզյան կոնֆերանսի նախօրյակին «աստվածավախ» ամերիկյան կառավարողները լրտեսական օդանավ ուղարկեցին Սովետական Միության տերիտորիա։ Իրը սովետական մարտիկները հրթիռահարեցին լրտեսական օդանավը և ցած բերեցին օդաչուին, Միացյալ Նահանգների ղեկավարները հայտարարեցին, թե իրենք տեղյակ չեն այդ թռիչքի մասին, սակայն անհերքելի փաստերի ազդեցության տակ մի քանի օր հետո ստիպված եղան ի լուր համայն աշխարհի խոստովանել իրականությունը։

«Սուտ խոսեցավ քրիստոնյա քաղաքակիրթ մեծ երկրի մը քրիստոնյա Նախագահը։ Սուտ խոսեցավ Պետական քրիստոնյա Քարտուղարը»,—գրում է Մարտիրոսյանը։ Եվ գա միանգամայն օրինաչափ է, որովհետև, ինչպես ճիշտ նշում է հեղինակը, «քրիստոնեությունը նոր գարու

ապականության պահապանն է ու օրհներգուն, որովհետև այժմու ապականությունները կը ծորին քաղաքակրթության բացած նոր աղբյուրեն՝ կապիտալիստական սիստեմեն։ Մտեք պետական հաստատություններեն ներս, դատարաններեն ներս, դպրոցներեն ու բուրժուա խմբագրատուններեն ներս, ամեն տեղ կթագավորե կեղծիքը, սուտը, խաբեությունը, և ասոնք բոլորը վարագուրողն է քրիստոնեական կրոնքը» (Բ., էջ 306)։

Աշխատության երկրորդ հատորի մեջ հեղինակը շարադրում է կրոնի առաջացման բազմաթիվ տեսություններ,—հատկապես անիմիստական (Է. Թեյլոր և Հ. Սպենսեր), բնապաշտական (նատուրիզմ—Մ. Մյուլեր), ֆրանսիական կամ կոլեկտիվիստական (Դյուրքհեյմ) տեսությունները, ցույց տալիս դրանց դրական կողմերն ու թերությունները։ Այնուհետև, օգտագործելով արդի գիտության տվյալները, նա հետազոտում է կրոնական պաշտամունքի առանձին տարրերի առաջացման պրոցեսը՝ կապված սոցիալական կյանքի փոփոխությունների և մարդկային իմացության զարգացման հետ։ Դրանցից հետո միայն նա շարադրում է կրոնի ծագման մատերիալիստական տեսությունը, որի հիմքը մարքսիստական պատմական մատերիալիզմն է։

Մարքսիստական տեսության կարևորագույն դրույթների ըմբռնումը հեղինակին հնարավորություն է տվել տեսնելու կրոնի պատմական զարգացումը (էվոլյուցիան) և նրա հաղթահարման ճշմարիտ ուղիները։ Իր աշխատության մեջ ընդարձակ քաղվածքներ բերելով Մարքսի, Էնգելսի և Լենինի կրոնին վերաբերող աշխատություններից, ուսումնասիրելով կրոնի նկատմամբ սովետական պետության վարած քաղաքականությունը, Մարտիրոսյանը հերքում է կապիտալիստական աշխարհում կառավարող շրջանների կողմից հրահրվող ու պաշտպանվող այն կարծիքները, թե իբր սոցիալիստական կարգերը թույլ չեն տալիս խղճի ազատություն, հալածանքի են ենթարկում հավատացյալներին և, թե իբր Սովետական Միությունը նահանջել է կրոնի հզորության առջև, և այլ ու այլ նման հերյուրանքները։ Մարտիրոսյանն իրավացիորեն նշում է, որ «Խ. Միությունը ոչ մեկ ատեն կրոնքը բռնի ուժով բանդել չէ ուզեր... Կրոնքն է, որ նահանջեր է սովետական իշխանության, այսինքն՝ աշխատավորներու իշխանության առջև...» (Բ., էջ 74)։

Մարտիրոսյանը նշում է, որ կոմունիզմը չի անարգում միամիտ հավատացյալներին, այլ նրանց հանձնարարում է ուսումնասիրել պատմությունը, պատմության օրենքները, գիտության նվաճումները և ձգտել հասնելու լավագույն կյանքի բոլոր մարդկանց ու ժողովուրդների համար, այնպիսի կյանքի «ուր մեր աշխարհի հողին վրա զրկանքի ճնշումով ոչ մեկ կաթիլ արցունք թափելու չէ։ Եվ գիտությունն է, որ մեզ կառաջնորդե դեպի այդ հանգրվանը։ Այո, գիտությունը, և ո՛չ թե կրոնքը։ Կրոնքը՝ երկինքի անտեսանելի դրախտը խոստացավ մարդուն, ու տեսանելի երկիրը վերածեց դժոխքի։ Գիտությունը ահա այդ դժոխքն է, որ պիտի փոխե դրախտի» (Բ., էջ 409)։

Սակայն գիտությունն ինքնըստինքյան անկարող է փոփոխել մարդկանց վիճակը, եթե նա չի օգտագործվում հասարակական առաջադիմական ուժերի կողմից, իսկ այդպիսի ուժեր են հանդիսանում բանվոր դասակարգը և նրա ինտերնացիոնալիստական պարտիան, որոնք ի վիճակի են վերացնելու մարդու կողմից մարդու շահագործումը, վերացնելու դասակարգերը։ Եվ «այն հասարակությունը,—նշում է Մարտիրոսյանը,—որ դասակարգերու բաժնված չէ, որ թաղած է պետական կազմը իր բոլոր ճյուղերով, որ չունի հարուստներ ու թշվառներ, չունի լացողներ ու վայելողներ, այդ հասարակության մեջ կրոնքը հող չունի» (Բ., էջ 414)։

Խոսելով կրոնի ծագման, նրա տարատեսակների առաջացման ու հասարակական դերի մասին, Մարտիրոսյանը, բացի մի քանի թեթև ակնարկներից, հիմնականում մի կողմ է թողնում հայկական կրոնի ու եկեղեցու հետ առնչվող հարցերը և միայն երկրորդ հատորի վերջում հավելվածի ձևով փորձում է պարզաբանել հայ ժողովրդի պատմության մեջ քրիստոնեական կրոնի խաղացած դերը։ Ուսումնասիրելով հայ ժողովրդի սոցիալական զարգացումը մեր թվարկության սկզբից, Մարտիրոսյանը հանգում է սովետական պատմագրության կողմից հաստատված ու ապացուցված այն եզրակացությանը, որ քրիստոնեական կրոնի մուտքը Հայաստան կապված էր երկրի տնտեսական ու սոցիալական պայմանների, մասնավորապես ճորտատիրական հարաբերությունների զարգացման հետ։ Մի շարք զորավոր փաստերով նա ցրում է հայ եկեղեցական պատմագրության այն դրույթը, թե իբր հայ եկեղեցին է եղել հայ ազգի գոյության պահպանման միակ հրաշագործ ուժը։ Նա ցույց է տալիս, որ քրիստոնեական կրոնը հայ ժողովրդին ոչ միայն անհամար թշվառություններ բերեց, այլև ակնհայտ բացասական դեր խաղաց նրա պատմության մի շարք կարևորագույն հանգուցակետերում։ Քրիստոնեությունը ոչընչացրեց նախորդ շրջանի հայկական ամբողջ մշակույթը։

Աշխատության եզրափակիչ հատվածը նվիրված է այսօրվա հայ եկեղեցու դերին ու արդի

հայ կղերականության բնութագրին։ Մարտիրոսյանը ցույց է տալիս հայ ժողովրդի երկու հիմնական հատվածների կյանքի արմատական տարբերությունը։ Հայության հիմնական մասը, որը կենտրոնացած է Սովետական Հայաստանում «Լենինյան ուղիով ստեղծեր է նոր երկիր մը՝ նոր կենցաղով, նոր կուլտուրայով. որու նմանը մենք չենք ունեցեր մեր ամբողջ անցյալ պատմության ընթացքին։ Մեր երկրեն չքացեր են բորբոսած մնացորդները, հին հրաշավեպերու ազդեցությունները. և անոնց տեղը հայ աշխատավորներուն ձեռքով կանգներ են աշխատանքի հրաշակերտ կոթողներ» (Բ., էջ 449)։

Մարտիրոսյանը ցույց է տալիս, թե ինչպես Սովետական կառավարության հոգատարության շնորհիվ հայ ժողովուրդը Սովետական Միության ժողովուրդների եղբայրական ընտանիքի մեջ կերտում է իր պայծառ ապագան, ինչպես նախկին ավերված ու թալանված երկիրը նա արդեն իսկ դարձրել է ծաղկող այգեստան ու առաջավոր արդյունաբերության երկիր։ Եվ այդ բոլորը ոչ թե «աստվածային կամքի», եկեղեցու «օրհնության» և աղոթքների, այլ սովետական կարգերի, կոմունիստական պարտիայի անդուլ հոգատարության ու ջանքերի ուժով։

Մարտիրոսյանը մերկացնում է սփյուռքահայ խավարամոլության, հատկապես դաշնակցական թափթփուկների այն հերյուրանքները, թե իբր Սովետական Հայաստանում եկեղեցին ու հավատացյալները հալածանքի են ենթարկվում. «Խորհրդային Հայաստանի մեջ,— գրում է նա,— Հայ Եկեղեցին կպահվի որպես հին ավանդական հաստատություն։ Անոր կապված անկեղծ հավատավորները հալածանքի չեն ենթարկվիր ու ծիծաղելի չեն դառնար, երբ եկեղեցի կը հաճախեն, լսելու համար իրենց հին հայրերու հորինած երգասացությունները, բայց անոնց հոգին այլևս աղերսանք չունի, որովհետև չկա բան մը զոր խորհրդային երկիրը իրենց կը զլանա տալ իր հնարավորության սահմանին մեջ» (Բ., էջ 451)։

Լ. Մարտիրոսյանը միանգամայն իրավացի է։ Սովետական Հայաստանում, ուր իշխում է խղճի ազատության սկզբունքը, եկեղեցին և հավատացյալները ոչ մի հալածանքի չեն ենթարկվում և իրենք էլ լոյալ վերաբերմունք են ցույց տալիս սովետական իշխանության նկատմամբ։

Սովետական Հայաստանում, այսպիսով, եկեղեցին այլևս քաղաքական, դասակարգային հաստատություն չէ, այլ պետությունից լիովին անջատված մի հիմնարկ։ Բոլորովին այլ է վիճակը սփյուռքահայության մոտ, ուր եկեղեցին դասակարգային երկպառակությունների արդարացման օրգան է և մասամբ դաշնակցականների՝ հայ ժողովրդի այդ երդվյալ թշնամիների ու ամեն գույնի կապիտալիստների հլու ծառաների հետ միացած նպաստում է գաղութահայության մասնատմանը, խանգարում հայրենադարձին։ «Ատով այդ սևազգեստ և սև հոգի վեղարավորը կապիտալիստական իմպերիալիզմին ստրկական ծառայություն մատուցանող դաշնակցական գործիք կը դառնար,— նշում է Մարտիրոսյանը,— և կը դավաճաներ հերոսական ոգորումներով իր ապագան կերտող հայ աշխատավորության, երբ գաղութահայության ուժերը կը բաժներ և կը զիներ եղբայրը եղբոր դեմ, զավակը իր հորը դեմ» (Բ., էջ 454)։

Լ. Մարտիրոսյանը այս բոլորից գալիս է միանգամայն ճիշտ եզրակացության, որը պարզում է հեղինակի դիրքը հայ ժողովրդի պատմական ճակատագրի, նրա ապագայի մասին և արժանի է, որ ամբողջությամբ այստեղ մեջ բերվի. «Ժամանակը եկած է,— եզրակացնում է նա,— որ Սփյուռքի Հայությունը գիտակցի այն ճշմարտության, որ մենք այսօր ունինք մեր պետականությունը, ձևով ազգային, բովանդակությամբ միջազգային պետականությունը, որ մենք այլևս կրոնական համայնք չենք, այլ նոր կուլտուրայով զարգացած ազգություն մը։ Այժմ մեր նշանաբանը չէ այլևս «ամեն հայ իր հոգիի փրկության համար», այլ ամեն հայ իր սոցիալիստական հայրենիքի ապահովության և զարգացման համար։

Այն օրը, այսինքն 1920, նոյեմբեր 29-ի պատմական օրը, երբ Հայաստանի մեջ հաստատվեցավ սոցիալիստական, սովետական հանրապետություն, այդ օրեն սկսավ մեր նոր դարաշրջանը, և մենք ունեցանք մեր ազգային մեծագույն տոնը, որովհետև Հայաստանի խորհրդայնացումը հայ ժողովրդի ծնունդն ու հարությունն է միանգամայն»։

Հիմնական հարցերը շարադրելով դիալեկտիկական սկզբունքով, հեղինակը, սակայն, երբեմն կոնկրետ հարցերի լուսաբանության ժամանակ թույլ է տալիս ոչ ճշգրիտ արտահայտություններ։ Այսպես, նշելով դիալեկտիկական մատերիալիզմի դերը՝ որպես համընդհանուր մեթոդի, նա հայտարարում է, թե մարքսիզմը «գիտություններու գիտություն է քանի որ իր մեջ կառնե կենսաբանությունը, բնախոսությունը, սաղմնաբանությունը, պատմությունը, տնտեսագիտությունը, տիեզերագիտությունը, ընկերաբանությունը, հոգեբանությունը, մեկ խոսքով մատերիալիստական փիլիսոփայությունը...» (Բ., էջ 391)։ Բոլոր գիտություններն իր մեջ ներառնելու հավակնություն ուներ նախամարքսյան փիլիսոփայությունը, և հենց մարքսիզմն էր, որ ճշգրտեց փիլիսոփայության առարկան, ցույց տալով, որ այն ոչ թե միավորում է բոլոր

գիտությունները, այլ ունի իր սեփական առարկան՝ բնության, հասարակության և մտածողության զարգացման առավել ընդհանուր օբյեկտիվ օրենքների իմացությունը։ Հիմնականում ճիշտ սահմանազատելով մատերիալիզմն ու իդեալիզմը, հեղինակը «Ցիտատներ հայտնի մատերիալիստներու գործերեն» բաժնում (Բ., 187, 189) մեջբերումներ է անում Լյութերից և Կանտից, ստեղծելով տպավորություն, թե նրանք էլ մատերիալիստներ են։ Այնինչ չպետք է մոռանալ, որ ամեն կրոնի դեմ արտահայտվողը դեռևս մատերիալիստ չէ։

Լ. Մարտիրոսյանը կոմունիստ չէ, սակայն նա ձգտել է ըստ հնարավորին ճիշտ ներկայացնել մարքսիստական փիլիսոփայությունը և եթե այդ կարևոր գործի ընթացքում նա թույլ. Լ ովել այս կամ այն մանր շեղումները, ապա դրանք միանգամայն հասկանալի են, եթե նկատի առնենք նրա կյանքի պայմանները, շրջապատը և անցած ուղին։

Մի քանի խոսք Լ. Մարտիրոսյանի աշխատության կառուցվածքի մասին։ Էական գծերով հիմնավոր լինելով հանդերձ, այն բավականաչափ կուռ չէ, որի հետևանքով տեղ են գտել մի շարք կրկնություններ, որոշ հարցերի երկակի քննարկումներ և այլն։ Աշխատությունը զերծ չէ նաև երբեմն ոչ ճշգրիտ ձևակերպումներից, տերմինների խառնաշփոթումներից և այլն։ Տարօրինակ է, որ հեղինակը քաջածանոթ լինելով հայ դրականության, համարյա թե չի օգտագործել հայ գործիչների հակակրոնական, աթեիստական երկերը։ Կրոնի մասին բերված ասույթների մեջ տեղ չեն գտել ոչ Մ. Նալբանդյանի, ոչ Գ. Կոստանդյանի և ոչ էլ հայ մյուս հեղինակների չափազանց հետաքրքիր մտքերը։ Սա անշուշտ գրքի կարևոր պակասությունն է։

Հայ ժողովուրդը հակակրոնական պայքարի դարավոր տրադիցիաներ ունի։ Դեռևս միջին դարերում Հայաստանում ծայր առած պավլիկյան և թոնդրակյան հզոր շարժումները, իրենց կապերը կրոնի հետ լիովին չխզելով հանդերձ, համարձակ պայքար էին մղում քրիստոնեական կրոնի մի շարք հիմնական դոգմաների և հասարակական կյանքում եկեղեցու գերիշխանության դեմ։ Մեր նախահայրերը խնամքով պահպանել ու սերնդից սերունդ հաղորդել են Վարդան Այգեկցու սրամիտ ու խայթող առակները՝ կրոնավորների կեղծավորության ու ընչաքաղցության մասին, Ֆրիկի խիզախ բողոքը՝ աշխարհում տիրող գույքային և հասարակական անհավասարության, «աստծո սահմանածը» կարգերի դեմ։

19-րդ դարի հայ իրականության մեջ տեղ գտավ եկեղեցու և կրոնի դիտական քննադատությունը կրոնի իմացաբանական արմատների և հասարակական ռեակցիոն դերի բացահայտումը Միրայել Նալբանդյանի և Գալուստ Կոստանդյանի՝ առաջին հայ աթեիստների կողմից։ 19-րդ դարի վերջերից Հայաստանում ծավալվեց արդեն մարքսիստական դիալեկտիկական-մատերիալիստական աշխարհայացքը, որի կարևորագույն տարրերից մեկը դիտական աթեիզմն է՝ կրոնի իմացաբանական ու սոցիալ-դասակարգային արմատների ճիշտ ըմբռնումով։

XIX դարի շատ հայ գրողներ իրենց երկերում մերկացրել ու սպանիչ ծաղրի են ենթարկել կրոնական հագուստով պարուրված հարստահարիչներին ու խաբեբաներին։ Մասնավորապես Մաֆֆու և Հ. Թումանյանի երկերում բազմաթիվ փայլուն էջեր են նվիրված եկեղեցու և կրոնականների խարդախությունների և խաբեբայության բացահայտմանը, աշխատավոր ժողովրդի եկամտամբ նրանց անտարբերության ու կեղծավորության մերկացմանը։

Սովետական Հայաստանում գիտա-աթեիստական պրոպագանդայի նպատակը ոչ միայն կրոնի ոստայնի մեջ ընկած մարդկանց գիտակցության մաքրումն է սնահավատություններից, հակագիտական ըմբռնումներից, այլև երիտասարդ սերնդի գիտակցության մեջ այդ վարակի թափանցման հնարավորության կանխումը։

Դրա համար ոչ միայն խնամքով ուսումնասիրվում են անցյալի հակակրոնական ու աթեիստական տրադիցիաները, այլև գիտության նորագույն տվյալների հիման վրա լայնորեն ծավալվում է գիտա-աթեիստական պրոպագանդան հրապարակվում են և՛ լուրջ գիտական հետազոտություններ, և՛ գիտա-հանրամատչելի գրականություն։ Վերջին տարիներին այդ ուղղությամբ նշանակալի գործ է արվել, մասնավորապես, հրատարակվել են բազմաթիվ թարգմանական ու ինքնուրույն աշխատություններ, այդ թվում Ֆրանսիացի Շարլ Էնշլենի «Կրոնի ծագումը» հետազոտությունը, Եմելյան Յարոսլավսկու «Կրոնի մասին» ժողովածուն, Պ. Պավլոկին «Կրոնական սնահավատություններն ու նրանց վնասը», Վ. Սևյանի «Կոմունիստական և կրոնական բարոյականության հակադրությունը», Թ. Իսայանի «Գերցենի աթեիզմը» գրքերը, Ա. Սվասյանի կազմած և աշխատասիրած «Աստվածները մեռնում են» ժողովածուն և բազմաթիվ հանրամատչելի գրքույկներ։

Զգացվում է, որ հեղինակը հնարավորություն չի ունեցել ծանոթանալու Սովետական Հայաստանում հրապարակված մարքսիստական և աթեիստական շատ ու շատ երկերի։ Այս, ան-

շուշտ, բխում է պայմաններից. կապիտալիստական Ամերիկայում ապրողի համար դա համարյա անհնարին է։

Այս բոլորով հանգերձ Լ. Մարտիրոսյանի աշխատությունը մի ուշագրավ երկ է, նշանավոր մի երևույթ սփյուռքահայ հասարակական կյանքում։ Նա ցույց է տալիս, որ սփյուռքահայության առաջավոր մասը ակտիվորեն պայքարում է հակակոմունիզմի ու հակաֆաշականության գրոշի տակ համախմբված սև ուժերի դեմ և ըմբռնում, որ հասարակական կյանքի ու նրա բոլոր երևույթների ճշմարիտ բացատրության բանալին տալիս է մարքսիզմ-լենինիզմի հզոր ուսմունքը, որն այսօր մարդկային երջանկության, խաղաղության և ապագայի անվեհեր գրոշակակիրն է։

Մ. Ա. ՄԵԼԻՔՅԱՆ